ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ
2025 թ. ապրիլի 23-ի թիվ 9 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Դ. Պետրոսյանի և Տ. Դանիելյանի հաղորդումը ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Դ. Պետրոսյանը և Տ. Դանիելյանը տեղեկացրին, որ նախապաշտպանությունից առաջ նախապես ծանոթացել են ավարտական աշխատանքներին, հանդիպումները գիտղեկավարների հետ կրում են պարբերական բնույթ, գործընթացը բնականոն կերպով ընթանում է, 4-րդ կուրսի ուսանողները և մագիստրատուրայում սովորողները պատրաստ են նախապաշտպանության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Ա. Ավետիսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության (ինքնուրույնության) տոկոսի ընդունելի շեմ սահմանելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Տ. Դանիելյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Զ. Մարգսյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության (ինքնուրույնության) ընդունելի շեմ սահմանել 60 տոկոսը:

ԼՍԵՑԻՆ- Ամբիոնների վերանվանման հարցը:

Ն. Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ վերանվանման հարցը նախ քննարկվել է ամբիոնների համատեղ նիստում: Որոշվել է Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնը վերանվանել Մեդիաուսումնասիրությունների և նշանագիտության, իսկ Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնը՝ Ժուռնալիստիկայի պատմության, տեսության և պրակտիկայի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Պետրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Տ. Դանիելյան, Ա. Ավետիսյան, Ա. Մարտիրոսյան, Մ. Կարապետյան, Ա. Ավետիսյան:*

Անցկացվեց բաց քվեարկություն:

Գիտխորհրդի նիստին ներկա 16 անդամներից 12-ը քվերարկեց «կողմ», 4-ը՝ «դեմ»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները՝ դիմել ռեկտորին հարցը ԵՊՀ գիտխորհրդի օրակարգում ներառելու խնդրանքով:

ԼՍԵՑԻՆ- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի առաջարկը՝ 2025-2029թթ. ուսումնական պլանում նախատեսված «Նշանագիտություն և մեդիա» դասընթացը նախորդող ուսումնական պլաններում «Մեդիան և քաղաքական տեխնոլոգիաները» դասընթացի փոխարեն ներառելու միջնորդությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Տ. Դանիելյան, Ա. Ավետիսյան, Մ. Կարապետյան, Ա. Մարտիրոսյան, Ն. Վարդանյան, Գ. Աբրահամյան, Մ. Հովհաննիսյան:*

Գիտխորհրդի նիստին ներկա 16 անդամներից 12-ը քվեարկեց «կողմ», 3-ը՝ «դեմ», 1-ը՝ «ձեռնպահ»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով բաց քվեարկության արդյունքները՝ Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի առաջարկը համարել ընդունված և դիմել ռեկտորատ՝ փոփոխությունը ամրագրելու խնդրանքով:

ԼՍԵՑԻՆ- ԻննոՄեդիա ուսումնական (փորձարարական) հեռուստաընկերության պատասխանատու նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Տ. Դանիելյան, Ա. Ավետիսյան, Ա. Մենեմշյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ԻննոՄեդիա ուսումնական (փորձարարական) հեռուստաընկերության պատասխանատու նշանակել բ.գ.թ., դոցենտ Գ. Աբրահամյանին:

Գիտխորհրդի նիստի ավարտից հետո Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Դ. Պետրոսյանը անցկացրեց գիտական սեմինար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ